Շառլ Պերրո | Կախարդուհին

Ժամանակով մի գոռոզ ու չար կին էր ապրում: Նա երկու աղջիկ ուներ: Մեծը և բնավորությամբ, և արտաքինով նման էր մորը: Փոքրը, ընդհակառակը, հորն էր նման՝ բարի ու պարկեշտ: Բացի այդ էլ՝ չտեսնված գեղեցիկ էր:
Մայրը գժի պես սիրում էր մեծ աղջկան, իսկ փոքրին ատում էր: Մեծին խնամում էր, ծառայում, ինչպես որ կծառայեն իշխանուհուն, իսկ փոքրին ստիպում էր գիշեր ու զօր աշխատել, նույնիսկ պատվիրում էր ճաշը խոհանոցում ուտել: Աղջիկը օրական 2 անգամ պարտավոր էր գնալ հեռու աղբյուրից ջուր բերել սափորով: Մի անգամ աղբյուրի մոտ մի աղքատ պառավ մոտեցավ նրան և ջուր խնդրեց: Աղջիկը ողողեց սափորը, ջուր լցրեց ու տվեց նրան: Եվ դեռ սափորի տակից էլ բռնած պահում էր, որ պառավի համար հեշտ ու հարմար լինի: Պառավը ջուրը խմեց ու ասաց.

- Դու շատ բարի ու պարկեշտ աղջիկ ես: Քո բարության ու պարկեշտության համար ես քեզ նվեր կտամ:

Իրականում պառավը կախարդ էր: Նա դիտմամբ է աղքատի շորեր հագել, որ փորձի աղջկան:

- Այսուհետ ամեն խոսք ասելիս,- շարունակեց կախարդը,- քո բերանից վարդ կամ թանկարժեք քարեր կթափվեն:

Պառավն ասաց ու չքվեց, իսկ աղջիկը լցրեց սափորը և վերադարձավ տուն: Երբ հասավ տուն, մայրն ուշանալու համար սկսեց հանդիմանել:

- Ներեցեք ինձ, մայրիկ, որ այսպես ուշացա,- ասաց աղջիկն ու բերանից 2 վարդ ընկան, 2 մարգարիտ և 2 հատ էլ խոշոր ադամանդ:

- Սա ի՞նչ բան է,- զարմանքից ճչաց մայրը: - Քո բերանից մարգարիտներ ու ադամանդնե՛ր են թափվում:

Աղջիկը ամեն ինչ պատմեց մորը ու նորից ամեն խոսքի հետ բերանից վարդեր ու ադամանդներ թափվեցին:

- Ահա թե ինչ,- ասաց մայրը: - Որ այդպես է, քրոջդ էլ պետք է ուղարկել այդ աղբյուրը: Այստեղ արի, աղջիկս, տես, ի՞նչ է թափվում քրոջդ բերանից, երբ խոսում է: Երևի դու էլ կցանկանայիր այդպիսի նվեր ստանալ կախարդից: Դրա համար պետք է գնաս աղբյուրը ու, երբ աղքատ հագնված կինը ջուր խնդրի քեզնից, քաղաքավարությամբ մատուցես:

- Այդ էր պակաս, որ գնամ ջուր բերեմ,- կոպիտ պատասխանեց աղջիկը:

- Ես քեզ հրամայում եմ գնա՛լ,- գոռաց մայրը:

Ալարկոտը վերցրեց տան ամենագեղեցիկ արծաթե սափորն ու գնաց անտառ: Այնտեղ շքեղ հագած մի գեղեցկուհի հանդիպեց նրան: Գեղեցկուհին մոտեցավ և ջուր խնդրեց:

Դա նույն կախարդն էր, որ երևացել էր նրա քրոջը: Այս անգամ իշխանուհու նման էր հագնվել, որ սրան էլ փորձեր:

- Մի՞թե ես եկել եմ այստեղ ձեզ ջուր տալու,- կոպտեց աղջիկը: - Գուցե կարծում եք, թե այս արծաթե սափորը ձեզ համար եմ բերել: Այդ էր պակաս: Ծարավ եք, բռերով վերցրեք, խմեք:

- Դու շատ չար ես,- ասաց կախարդը: - Քո չարության համար ես քեզ նվեր կտամ: Ամեն անգամ խոսելիս,- շարունակեց նա,- քո բերանից օձեր, մկներ կամ դոդոշներ կթափվեն:

Ասաց ու չքվեց, իսկ կոպիտ աղջիկը անշտապ քայլեց դեպի տուն: Մայրը չէր համբերում, որ աղջիկը հասնի տուն: Նա ընդառաջ գնաց ու տեսնելով իր սիրելիին, գոչեց.

- Հը, աղջիկս, ինչպե՞ս են գործերդ:

- Հը, մայրիկս, ինչպե՞ս են գործերդ,- ծաղրեց նա մորը, և բերանից օձեր, մկներ և դոդոշներ թափվեցին:

- Այս ի՞նչ եմ տեսնում,- սարսափահար կանչեց մայրը: - Սա քրոջդ արած գործերն են: Նա դրա դիմաց պատասխան կտա:

Մայրը նետվեց փոքր աղջկան ծեծելու: Խեղճ աղջիկը փախավ ու թաքնվեց մոտակա անտառում: Այստեղ էլ նրան տեսավ մի ջահել արքայազն, որ որսից էր վերադառնում: Նրա գեղեցկությունից ապշած, հարցրեց, թե աղջիկը մենակ ինչ է անում անտառում և ինչու է այդպես դառը արտասվում:

- Ախ, մայրիկս ինձ վռնդել է տնից,- ասաց աղջիկը, և նրա բերանից 5 հատ մարգարիտ թափվեց, նույնքան էլ ադամանդ:

Արքայազնը շատ զարմացավ: Նա խնդրեց աղջկան պատմել, թե ինչու են բերանից մարգարիտներ ու ադամանդներ թափվում: Աղջիկն ամեն ինչ պատմեց: Արքայազնը տեղնուտեղը սիրահարվեց նրան, տարավ պալատ ու ամուսնացավ նրա հետ: Իսկ քույրը օձերով ու դոդոշներով այնքան զզվեցրեց բոլորին, որ նույնիսկ հարազատ մայրը վռնդեց նրան: